ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի ապրիլի 21-ից մայիսի 11-ը Իսրայելում կայացած «Պատրաստվածություն արտակարգ իրավիճակներում» խորագրով միջազգային դասընթացի մասնակցության վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

   Բագրատ Վարդազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության փրկարար ուժերի համակարգման և որակավորման կազմակերպման բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Իսրայել Պետություն, 2018 թվականի ապրիլի 21-ից մայիսի 11-ը

4. **Հրավիրող կողմը**

   Իսրայելի միջազգային համագործակցության զարգացման գործակալություն (MASHAV)

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակիցներին ծանոթացնել Իսրայելին սպառնացող տարատեսակ արտակարգ իրավիճակների պատրաստվածության համակարգին, սպառնացող վտանգների կանխարգելման ճանապարհներին և մոտեցումներին, արտակարգ իրավիճակներին արձագանքող ուժերի հնարավորություններն, ինչպես նաև ազդարարման համակարգի ժամանակակից լուծումներին: Մասնակիցները հնարավորություն ունեցան նաև փորձի փոխանակման միջոցով ներկայացնել իրենց երկրներում արտակարգ իրավիճակների պատրաստվածության մակարդակը և սպառնալիքները:

6. **Քննարկված թեմաները**

պատրաստվածություն տարատեսակ արտակարգ իրավիճակների դեպքում, սպառնացող վտանգների կանխարգելման ճանապարհներն ու մոտեցումները, արտակարգ իրավիճակներին արձագանքող ուժերի հնարավորություններն ու վաղ ազդարարման համակարգի ժամանակակից լուծումները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Ներկայացվել է Հայաստանի Հանրապետությանը սպառնացող տեխնածին և տարերային աղետների, դրանց կանխարգելման և հետևանքների վերացման վերաբերյալ զեկույց: Ներկայացվել է արտակարգ իրավիճակներում պետական լիազոր մարմնի կառուցվածքն ու գործառույթները: Իմ կողմից փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Իմ կողմից առաջարկվել է մյուս մնանատիպ խորագրով դասընթացի ժամանակ ընդգրկել նաև կիբեռ ահաբեկչության անվտանգությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ դասընթաց, ինչպես նաև մասնակիցներին հնարավորություն ընձեռել որպես դիտորդ ընդգրկվել ցուցադրական վարժանքի՝ կամավորների և արձագանքող հիմնական ուժերի պատրաստվածության աստիճանը համեմատելու համար:

9. **Գործուղվողը**

Բագրատ Վարդազարյան

10. **Ստորագրությունը, ամսաթիվը** 15.05.2018թ.